

2017 թվական
հունվարի 23

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորավան
համայնք

2017 թվականի հունվարի 23-ին Նորավանի համայնքապետարանում տեղի ունեցավ Նորավան համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2016 թվականի 2-րդ կիսամյակում և տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին. Հաշվետվության ներկայացմանը ներկա էին Արմավիրի մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժնի պետ Արմեն Թովմասյան, Նորավանի ավագանու անդամներ Կարեն Պետրոսյանը, Գրիշա Սուրադյանը, Մարգարիտ Խաչատրյանը, Արտեմ Աբգարյանը և Էդգար Մկրտչյանը, համայնքապետարանի աշխատակիցներ Անի Խաչատրյանը, Վանիկ Սմբատյանը, Անի Մանուկյանը և Յուրիկ Աբգարյանը, համայնքի բնակիչներ Սամվել Շահվերդյանը, Հակոբ Ասատրյանը:

Համայնքի ղեկավարը մանրամասն տեղեկացրեց կատարված աշխատանքների մասին, որը գետեղված է անփոփ հաշվետվության մեջ:

ՆՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017 թվականի
հունվարի 23

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

- Համայնքի ղեկավարի իրավասությունների շրջանակում հրավիրվել է ավագանու 11 նիստ, ընդունվել է ավագանու 45 որոշումներ՝ կապված բյուջեի փոփոխության, հողի հարկի և գույքահարկի գանձումների բարելավման, ամենամյա գույքագրման և հողային հաշվեկշռի հաստատման մասին:
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 7 որոշումներ և 11 կարգադրություններ:
- Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 10 հրաման:
- Մարզպետարանից և այլ կազմակերպությունների կողմից ստացվել է թվով 229 գրություններ:
- Համայնքապետարանի կողմից ելքագրվել է թվով 139 գրություններ:
- Համայնքի բնակիչներին հատկացվել է թվով 409 տարաբնույթ տեղեկանքներ:
- Նորավան համայնքի բնակիչների կողմից ստացվել է թվով 36 դիմումներ, և բոլորին տրվել է անհրաժեշտ լուծումներ:
- Կատարվում է քաղաքացիների ընդունելություն՝ օրենքով սահմանված կարգով:
- Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերին համապատասխան 3 առևտրի օբյեկտներին հատկացվում է ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն:
- 2016 թվականին հողի հարկի և գույքահարկի գանձումները կազմում են

	<u>այլան</u> հազ.դրամ	<u>կատարողական</u> հազ.դրամ	<u>%</u>
ա. Տարեկան	3350.0	3362.6	100.3
բ. Տարեկան	2250.0	2314.5	102.8
գ. Տարեկան	376.0	375.9	99.9
դ. Տարեկան	160.0	384.1	240

2016 թվականի ընթացքում ստացվել է դրույքա 20958.9 հազ.դրամ: Վճարվել է աշխատավարձ 16223.7 հազ.դրամ:

- Գրադարանի աշխատավարձը վճարվել է 873.5 հազ.դրամ:
- 2016 թվականին դպրոցի, համայնքապետարանի շենքի և գերեզմանատան հարակից տարածքներում կատարվել է բարեկարգման աշխատանքներ:
- Համայնքային սեփականություն հանդիսացող 23.0 հա հողատարածքներ ավագանու որոշմամբ հատկացված է վարձակալության մրցութային կարգով:

- Սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների շրջանակներում Նորավան համայնքում կազմակերպվել է անասնադրի և կենցաղային աղբի մաքրման աշխատանքներ և ստուգումներ:
- 2016 թվականի ընթացքում մեծ ուշադրություն և հսկողություն է սահմանվել շինարարական աշխատանքները օրինական կարգով կատարելու գործում:
- 2016 թվականի ընթացքում կազմակերպվել և գյուղացիական տնտեսություններին է տրամադրվել անհրաժեշտ քանակությամբ պարարտանյութ և դիզելային վառելանյութ:
- Նորավան համայնքում ավագանու որոշմամբ աղբահանությունը կազմակերպվում է անհատ ձեռներեցի կողմից՝ շաբաթական մեկ օր, որի համար հատկացվել է 960.0 հազ. դրամ:
- Գրասենյակային, կապի, էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը 2016 թվականի ընթացքում կազմել են 1408.0 հազ.դրամ:
- 2016 թվականի ընթացքում Նորավան համայնքի ավագանու որոշմամբ թվով 18 սոցիալապես անապահով ընտանիքների հատկացվել է դրամական օգնություն 860 0 հազ. դրամ գումարի չափով:
- Իրականացվել է Նորավան համայնքի փողոցների լուսավորության աշխատանքներ:
- Իրականացվել է դաշտամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ:
- Ընթացքի մեջ է համայնքի փողոցների ծայրամասային հատվածներում գազաֆիկացման աշխատանքները:
- 2016 թվականի ընթացքում իրականացվել է խաղահրապարակի բարեկարգում և բարմացում:
- Նորավա համայնքապետարանի կողմից վերահսկողություն է իրականացվում ընտանի կենդանիների ժամանակին բուժումներ կատարելու գործում:
 Համայնքի անասնաբույժի կողմից ժամանակին իրականացվում է խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ստուգումները, դաբաղի պատվաստումը, բրուցելյոզի ստուգումները, խոզերի, մանր եղջերավոր անասունների անհրաժեշտ բուժումները և ստուգումները:
 Իրականացվում է նաև 285 մեղվաըտանիքների վարիտոզի մշակումը.

Նորավանի համայնքապետարանի աշխատակիցների աշխատանքները 2017 թվականի ընթացքում անհրաժեշտ է կենտրոնացնել հետևյալ կարևոր խնդիրների վրա.

- Ապահովել բյուջեով նախատեսված մուտքերի հավաքագրումն ըստ եռամսյակների.
- ՀՀ Կադաստրի Արմավիրի տարածքային ծառայության հետ համատեղ իրականացնել քարտեզագրման ժամանակ թույլ տրված սխալների ճշգրտումներ:
- Միջոցներ և հնարավորություններ փնտրել Նորավան համայնքում մանկապարտեզ կառուցելու համար:
- Ավարտին հասցնել գերեզմանատան հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները:
- Իրականացնել դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:

Նորավան համայնքի բնակչության առջև ծառայած խնդիրներ կան, որոնց
լուծման համար պահանջվում է մարզպետարանի միջնորդությունը՝ ֆինանսական
միջոցներ ներդնելու համար:

- Գյուղամիջյան ճանապարհների և ոռոգման ցանցերի բարելավում:
- Մանկապարտեզի շենքի կառուցում:
- Մշակույթի տան կառուցում:
- Հեղեղատարի մաքրման աշխատանքների իրականացում:

ՆՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԵԱԼԸ



Ա. ՄԻՔԵԼԻԱՆ

2017 թվականի
հունվարի 23